# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Նոյեմբերի 6-ին, կիրակի.- Դ կիրակի զկնի Սրբոյ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Նոյեմբերի 13-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Սրբոյ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պսակ աբղ. Մուրադյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ արիւն քո ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց» (Պատարագամատոյց) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Նոյեմբերի 20-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Սրբոյ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզներ խոսեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Տ. Իգնատիոս Զաքքա Ա Իվասը (տե՛ս էջ 10):

*Նոյեմբերի 27-ին, կիրակի.- Գյուտ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբղ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես աշխարհի» (Գաղ. Զ 14) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: